ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/13Շ-1

ք. Երևան **«15» օգոստոսի 2019թ.**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Հ.Բատիկյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու),մի կողմից, և «Ա.Ա.Բ Պրոեկտ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա.Բաղալյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ65+350-կմ77+350 հատվածի հիմնանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 2019թ.-ին իրականացվելիք աշխատանքների համար՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 150 օր, բայց ոչ ուշ, քան 2019թ. դեկտեմբերի 10-ը, իսկ մնացած իրականացվելիք աշխատանքների համար՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո 30 օր:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 75 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետ է սահմանվում պատվիրատուի կողմից ողջ ծավալով աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 3 տարին:

3.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ

շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 1 839 600 000 (մեկ միլիարդ ութ հարյուր երեսունինը միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ, որից 306 600 000 (երեք հարյուր վեց միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն, իսկ 2019 թվականին իրականացվելիք աշխատանքների գինը կազմում է 1 620 614 524 (մեկ միլիարդ վեց հարյուր քսան միլիոն վեց հարյուր տասչորս հազար հինգ հարյուր քսանչորս) ՀՀ դրամ, որից 270 102 420 (երկու հարյուր յոթանասուն միլիոն մեկ հարյուր երկու հազար չորս հարյուր քսան) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: ՀՀ դրամ: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը: **Իսկ մնացած աշխատանքների համար վճարումը կիրականացվի ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, որի վերաբերյալ կողմերի միջև կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:**

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է.

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ –ն նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[43] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

---

[43] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[44]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող

---

[44] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 19 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 18-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովման փոխարինման դեպքում նաև նոր ապահովումը Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:[47]

[47] *Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովման փոխարինման դեպքում նաև նոր ապահովումը» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02578338
Հ/Հ 900011025823

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Ա.Ա.Բ Պրոեկտ» ՍՊԸ
ք.Երևան, Արաբկիր փ.39/1ա
«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 00250339
ՀՀ 24701009918800 10

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 1
«15» օգոստոսի 2019 թ. կնքված
ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/13Շ-1 ծածկագրով պայմանագրի

ՉԱՓԱԲԱԺԻՆ 1
ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ
Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ65+350-կմ77+350 հատվածի հիմնանորոգման աշխատանքների
(Ընդհանուր)

/ՀՀ հազ. Դրամ/

NN	Աշխատանքների անվանումը	Չափ. միավ.	Ծավալը	Միավորի արժեքը *	Ընդհանուր արժեքը
1	*2*	*3*	*4*	*5*	*6*
	I. Հողային աշխատանքներ				
1	*Կողային առուների մաքրում*	*գծ.մ*	*3771.0*	*0.532*	*2 006.172*
2	*Կողնակների ամրացում ավազակոպիճով h=4սմ*	*մ²*	*31401.5*	*0.406*	*12 749.009*
	II. Երթևեկային մաս				
1	*Գոյություն ունեցող ճան. հագուստի քանդում 1.0մ³ էքս. բարձում ա/ի և տեղափոխում 4 կմ լցակույտ*	*մ³*	*26117*	*2.080*	*54 323.360*
2	*Նույնը՝ ձեռքի աշխատանքով*	*մ³*	*73.6*	*8.010*	*589.536*
3	*ճան. հագուստի քանդում բուլդոզերով և տեղափոխում 20մ կուտակումով, բարձում 10մ³ էքս., տեղափոխում 4կմ լցակույտ*	*մ³*	*10039.26*	*2.117*	*21 253.113*
4	*Ավազակոպճային շերտի տեղադրում h=10 սմ*	*մ²*	*103610.95*	*0.555*	*57 504.077*
5	*Խճային հիմքի տեղադրում h=15 սմ բիտումի 4.12տ/1000մ² տարածումով*	*մ²*	*103610.95*	*3.450*	*357 407.280*
6	*Գոյություն ունեցող ա/բ ծածկի ֆրեզում $h_{միջ}$=5սմ, հանձնում սեփականատիրոջը*	*մ²*	*17065.85*	*0.855*	*14 591.302*
7	*Փոսային նորոգում հիմքում-խիճ h=(8-16)սմ բիտումի տարածումով*	*մ²*	*1116.0*	*3.174*	*3 542.184*
	խ/հ ա/բ h=6սմ	*մ²*	*1116.0*	*7.323*	*8 172.468*
8	*Հարթեցնող շերտ մ/հ ա/բ $h_{միջ}$= 3 սմ*	*տ*	*481.26*	*46.180*	*22 224.587*
9	*Ծածկի ներքին շերտի խ/հ ա/բ h=6սմ*	*մ²*	*103610.95*	*6.014*	*623 116.253*
10	*Ծածկի վերին շերտի մ/հ ա/բ h=5սմ*	*մ²*	*17065.85*	*5.497*	*93 810.977*
11	*Ծածկի վերին շերտի մ/հ ա/բ h=4սմ*	*մ²*	*103610.95*	*4.463*	*462 415.670*
	III. Իջատեղեր				
1	*(10eIV) բնահողի մշակում բուլդոզերով տեղափոխում 10մ կուտակումով. բարձում էքս. 0,65մ³ և տեղափոխում 4կմ լցակույտ*	*մ³*	*242.0*	*1.740*	*421.080*
2	*Նույնը ձեռքի աշխատանքով*	*մ³*	*14.4*	*6.675*	*96.120*
3	*Խրամուղու քանդում 0.65մ³ էքս. կողքի կուտակումով*	*մ³*	*15.0*	*0.703*	*10.545*
4	*Նույնը՝ ձեռքի աշխատանքով*	*մ³*	*1.64*	*4.988*	*8.180*
5	*Ավազակոպճային շերտ h=10սմ (խողովակների տակ)*	*մ³*	*1.69*	*5.882*	*9.941*

6	d=0.530մ մետաղական խողովակների ("=7մմ) տեղադրում	գծմ	26	98.612	2 563.912
7	Գլխամասերի կառուցում միաձույլ բետոն B-20	մ³	3.07	110.595	339.527
8	Ջրամեկուսացում				
	խողովակ	գծմ	23.6	2.866	67.638
	բետոն	մ²	15.04	1.189	17.883
9	Հետադարձ լիցք	մ³	9.1	1.708	15.543
10	Ավելորդ բնահողի բարձում ձեռքով, տեղափոխում 4կմ	մ³	7.54	1.687	12.720
11	Հողային պաստառի հարթեցում բուլդոզերով	մ²	1602.49	0.019	30.447
12	Խճային հիմքի տեղադրում h=12սմ	մ²	1602.49	1.694	2 714.618
13	ա/բ շերտի տեղադրում h=4սմ	մ²	2102.49	4.413	9 278.288
	IV. Մայթեր				
1	Գոյություն ունեցող 15x30բազ. ե/ք ապամոնտաժում , հանձնում սեփականատիրոջը	գծմ	593.1	1.131	670.796
	Գոյություն ունեցող եզրաշարի քանդում, բարձում, տեղափոխում 4կմ լցակույտ	գծմ	388	0.558	216.504
2	Մայթի ծածկի քանդում ձեռքով, բարձում, տեղափոխում 4կմ լցակույտ	մ²	515.9	0.135	69.647
3	Ե/ք տեղադրման համար խրամուղու կառուցում, հանույթ	մ³	15.68	6.675	104.664
4	Բազ. 15x30 ե/ք տեղադրում 100գծմ 3.5մ³բ.	գծմ	470.7	11.879	5 591.445
5	Բազ. 20x50 ե/ք տեղադրում 100գծմ 4մ³բ.	գծմ	125.6	22.661	2 846.222
6	Միաձույլ բետ. եզրաշար 10x20 , B-20	գծմ	388	1.368	530.784
7	Ավազակոպճային շերտի տեղադրում h=7 սմ	մ²	515.9	0.371	191.399
8	Ավազային ա/բ ծածկ h=3սմ	մ²	515.9	3.586	1 850.017
	Արգելափակոցներ				
1	Գոյություն ունեցող մետ. արգելափակոցների ապամոնտաժում հանձնում սեփականատիրոջը	գծմ	570	2.007	1 143.990
2	Ճոպանային արգելափակոցների սյուների ապամոնտաժում, հանձնում սեփականատիրոջը	հատ	758	4.128	3 129.024
3	Ազդանշանային սյուների ապամոնտաժում, տեղափոխում 4կմ	հատ	30	4.195	125.850
4	Նոր մետաղական արգելափակոցների տեղադրում	գծմ	6480	24.233	157 029.840
5	C-1 տիպի պլաստիկ ուղղորդ սյուների տեղադրում	հատ	363	5.737	2 082.531
	VI. Հենապատի տարածքի մաքրում				
1	Բնահողի մշակում բուլդոզերով, տեղափոխում 20մ կուտակումով, բարձում ա/ի, տեղափոխում 4կմ լցակույտ	մ³	32	1.828	58.496
2	Նույնը՝ ձեռքի աշխատանքով	մ³	16	6.675	106.800
	VII. Կամուրջների նորոգում				
1	Հունի մաքրում մուտքում և ելքում ձեռքի աշխատանքով, բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 4 կմ	մ³	13	6.675	86.775
3	Կամրջատակի մաքրում ձեռքի աշխատանքով, բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 4կմ	մ³	10	6.675	66.750
4	Պարապետի ապոմոնտաժում տեղափոխում լցակույտ 4 կմ	մ³	0.24	27.829	6.679

5	Նոր պարապետի կառուցում միաձույլ բետոնով B20 F100	մ³	1.99	130.055	258.809
	VIII. Ե/բ խողովակներ d=1.0մ նորոգում				
1	Հունի մաքրում մուտքում ձեռքի աշխատանքով, բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 4 կմ	մ³	29	6.675	193.575
2	Մաքրում ելքում ձեռքի աշխատանքով, բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 4 կմ	մ³	15	6.675	100.125
3	Մաքրում խողովակի մեջ ձեռքի աշխատանքով, բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 4 կմ	մ³	6	6.675	40.050
4	Գլխամասի իրանի ապամոնտաժում	մ³	4.03	27.829	112.151
5	Գլխամասի իրանի կառուցում միաձույլ բետոնով B20	մ³	4.35	110.595	481.088
6	Ելքում գլխադիրի բարձրացում միաձույլ բետոնով B20 F100	մ³	0.22	68.364	15.040
7	Գլխամասի հիմքի ապամոնտաժում	մ³	0.72	27.829	20.037
8	Գլխամասի հիմքի կառուցում	մ³	0.65	110.595	71.887
9	Ջրամեկուսացում. իրան	մ²	8.15	1.189	9.690
10	Ջրամեկուսացում. հիմք	մ³	5.04	1.189	5.993
11	Վաքի կառուցում	մ³	0.93	82.516	76.740
12	Ատամի կառուցում	մ³	0.54	82.516	44.559
13	Գլխամասի նորոգում	մ³	0.8	110.595	88.476
14	Գլխամասի իրանի սվաղ 5սմ	մ²	7.8	3.249	25.342
	IX. Ե/բ խողովակներ d=1.25-1.5մ նորոգում				
1	Հունի մաքրում մուտքում ձեռքի աշխատանքով, բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 4 կմ	մ³	8	6.675	53.400
2	Գլխամասի իրանի ապամոնտաժում	մ³	3.16	27.829	87.940
3	Գլխամասի իրանի կառուցում B20 F100	մ³	4.29	110.595	474.453
4	Ելքում գլխամասի բարձրացում միաձույլ բետոնով B20 F100	մ³	0.48	68.364	32.815
5	Մուտքում գլխամասի բարձրացում միաձույլ բետոնով B20 F100	մ³	0.48	68.364	32.815
6	Վաքի կառուցում	մ³	1.2	82.516	99.019
7	Ատամի կառուցում	մ³	0.48	82.516	39.608
8	Ելքում գլխամասի իրանի սվաղ h=5սմ	մ³	3.64	3.249	11.826
	X. Հավաքովի ուղղանկյուն բացվածքով Ե/բ խողովակներ նորոգում				
1	Հունի մաքրում մուտքում ձեռքի աշխատանքով, բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 4 կմ	մ³	10	6.675	66.750
2	Հունի մաքրում ելքում ձեռքի աշխատանքով, բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 4 կմ	մ³	12	6.675	80.100
3	Խողովակի մեջ մաքրում ձեռքի աշխատանքով, բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 4 կմ	մ³	3	6.675	20.025
4	Մուտքում գլխադիրի կառուցում միաձույլ բետոնով B20 F100	մ³	1.09	68.364	74.517
5	Ելքում գլխադիրի կառուցում միաձույլ բետոնով B20 F100	մ³	1.09	68.364	74.517
6	Գլխադիրի ապամոնտաժում տեղափոխում լցակույտ 4 կմ	մ³	0.548	27.829	15.250
7	Նոր գլխադիրի կառուցում միաձույլ բետոնով B20 F100	մ³	2.43	68.364	166.125

8	Թևերի ապամոնտաժում ելքում/մուտքում	մ³	10.81	27.829	300.831
9	Թևերի կառուցում ելքում/մուտքում	մ³	12.16	68.364	831.306
10	Ջրամեկուսացում՝ թևերի	մ²	34.7	1.189	41.258
11	Ջրամեկուսացում՝ օղակի	մ²	8	1.189	9.512
12	Թևերի և գլխադիրի սվաղում h=5սմ	մ²	56.66	3.249	184.088
13	Վաքի և ատամի կառուցում	մ³	2.52	82.516	207.940
14	Հետադարձ լիցք	մ³	36	0.828	29.808
15	Քարային լիցք	մ³	6	5.722	34.332
				Ընդամենը	**1 929 712.440**

*Միավորի արժեքը ներառում է բոլոր ծախսերը, ներառյալ «Շահույթը» ՝ 11% և ԱԱՀ-ն՝ 20%

Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ65+350-կմ77+350 հատվածի հիմնանորոգման աշխատանքների (2019 թ. իրականացվելիք)

/ՀՀ հազ. Դրամ/

NN	Աշխատանքների անվանումը	Չափ. միավ.	Ծավալը	Միավորի արժեքը *	Ընդհանուր արժեքը
1	2	3	4	5	6
	I. Հողային աշխատանքներ				
1	Կողային առուների մաքրում	գծ.մ	3771.0	0.532	2 006.172
2	Կողնակների ամրացում ավազակոպիճով h=4սմ	մ2	31401.5	0.406	12 749.009
	II. Երթևեկային մաս				
1	Գոյություն ունեցող ճան. հագուստի քանդում 1.0մ³ էքս. բարձում ա/ի և տեղափոխում 4 կմ լցակույտ	մ³	26117	2.080	54 323.360
2	Նույնը՝ ձեռքի աշխատանքով	մ³	73.6	8.010	589.536
3	ճան. հագուստի քանդում բուլդոզերով և տեղափոխում 20մ կուտակումով, բարձում 10մ³ էքս., տեղափոխում 4կմ լցակույտ	մ³	10039.26	2.117	21 253.113
4	Ավազակոպճային շերտի տեղադրում h=10 սմ	մ²	103610.95	0.555	57 504.077
5	Խճային հիմքի տեղադրում h=15 սմ բիտումի 4.12տ/1000մ² տարածումով	մ²	103610.95	3.450	357 407.280
6	Գոյություն ունեցող ա/բ ծածկի ֆրեզում $h_{միջ}$=5սմ, հանձնում սեփականատիրոջը	մ²	8270.348	0.855	7 071.148
7	Փոսային նորոգում հիմքում-խիճ h=(8-16)սմ բիտումի տարածումով	մ²	1116.0	3.174	3 542.184
	խ/հ ա/բ h=6սմ	մ²	1116.0	7.323	8 172.468
8	Հարթեցնող շերտ մ/հ ա/բ $h_{միջ}$= 3 սմ	տ	481.26	46.180	22 224.587
9	Ծածկի ներքին շերտի խ/հ ա/բ h=6սմ	մ²	103610.95	6.014	623 116.253
10	Ծածկի վերին շերտի մ/հ ա/բ h=5սմ	մ²	8270.348	5.497	45 462.103
11	Ծածկի վերին շերտի մ/հ ա/բ h=4սմ	մ²	103610.95	4.463	462 415.670
	III. Իջատեղեր				
1	(10eIV) բնահողի մշակում բուլդոզերով տեղափոխում	մ³	0	1.740	0

	10մ կուտակումով. բարձում էքս. 0,65մ³ և տեղափոխում 4կմ լցակույտ				
2	Նույնը ձեռքի աշխատանքով	մ³	0	6.675	0
3	Խրամուղու քանդում 0.65մ³ էքս. կողքի կուտակումով	մ³	15.0	0.703	10.545
4	Նույնը՝ ձեռքի աշխատանքով	մ³	1.64	4.988	8.180
5	Ավազակոպճային շերտ h=10սմ (խողովակների տակ)	մ³	1.69	5.882	9.941
6	d=0.530մ մետաղական խողովակների (''=7մմ) տեղադրում	գծմ	26	98.612	2 563.912
7	Գլխամասերի կառուցում միաձույլ բետոն B-20	մ³	3.07	110.595	339.527
8	Ջրամեկուսացում				
	խողովակ	գծմ	23.6	2.866	67.638
	բետոն	մ²	15.04	1.189	17.883
9	Հետադարձ լիցք	մ³	9.1	1.708	15.543
10	Ավելորդ բնահողի բարձում ձեռքով, տեղափոխում 4կմ	մ³	7.54	1.687	12.720
11	Հողային պաստառի հարթեցում բուլդոզերով	մ²	0	0.019	0
12	Խճային հիմքի տեղադրում h=12սմ	մ²	0	1.694	0
13	ա/բ շերտի տեղադրում h=4սմ	մ²	0	4.413	0
	IV. Մայթեր				
1	Գոյություն ունեցող 15x30բազ. ե/ք ապամոնտաժում , հանձնում սեփականատիրոջը	գծմ	593.1	1.131	670.796
	Գոյություն ունեցող եզրաշարի քանդում, բարձում, տեղափոխում 4կմ լցակույտ	գծմ	388	0.558	216.504
2	Մայթի ծածկի քանդում ձեռքով, բարձում, տեղափոխում 4կմ լցակույտ	մ²	515.9	0.135	69.647
3	Ե/ք տեղադրման համար խրամուղու կառուցում, հանույթ	մ³	15.68	6.675	104.664
4	Բազ. 15x30 ե/ք տեղադրում 100գծմ 3.5մ³բ.	գծմ	470.7	11.879	5 591.445
5	Բազ. 20x50 ե/ք տեղադրում 100գծմ 4մ³բ.	գծմ	125.6	22.661	2 846.222
6	Միաձույլ բետ. եզրաշար 10x20 , B-20	գծմ	388	1.368	530.784
7	Ավազակոպճային շերտի տեղադրում h=7 սմ	մ²	515.9	0.371	191.399
8	Ավազային ա/բ ծածկ h=3սմ	մ²	515.9	3.586	1 850.017
	V. Արգելափակոցներ				
1	Գոյություն ունեցող մետ. արգելափակոցների ապամոնտաժում հանձնում սեփականատիրոջը	գծմ	0	2.007	0
2	Ճոպանային արգելափակոցների սյուների ապամոնտաժում, հանձնում սեփականատիրոջը	հատ	0	4.128	0
3	Ազդանշանային սյուների ապամոնտաժում, տեղափոխում 4կմ	հատ	30	4.195	125.850
4	Նոր մետաղական արգելափակոցների տեղադրում	գծմ	0	24.233	0
5	C-1 տիպի պլաստիկ ուղղորդ սյուների տեղադրում	հատ	363	5.737	2 082.531
	VI. Հենապատի տարածքի մաքրում				
1	Բնահողի մշակում բուլդոզերով, տեղափոխում 20մ կուտակումով, բարձում ա/ի, տեղափոխում 4կմ լցակույտ	մ³	32	1.828	58.496
2	Նույնը՝ ձեռքի աշխատանքով	մ³	16	6.675	106.800
	VII. Կամուրջների նորոգում				
1	Հունի մաքրում մուտքում և ելքում ձեռքի աշխատանքով, բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 4 կմ	մ³	13	6.675	86.775
3	Կամրջափակի մաքրում ձեռքի աշխատանքով,	մ³	10	6.675	66.750

	բարձում ա/հ և տեղափոխում լցակույտ 4կմ				
4	Պարապետի ապամոնտաժում տեղափոխում լցակույտ 4 կմ	մ³	0.24	27.829	6.679
5	Նոր պարապետի կառուցում միաձույլ բետոնով B20 F100	մ³	1.99	130.055	258.809
	VIII. Ե/բ խողովակներ d=1.0մ նորոգում				
1	Հունի մաքրում մուտքում ձեռքի աշխատանքով, բարձում ա/հ և տեղափոխում լցակույտ 4 կմ	մ³	29	6.675	193.575
2	Մաքրում ելքում ձեռքի աշխատանքով, բարձում ա/հ և տեղափոխում լցակույտ 4 կմ	մ³	15	6.675	100.125
3	Մաքրում խողովակի մեջ ձեռքի աշխատանքով, բարձում ա/հ և տեղափոխում լցակույտ 4 կմ	մ³	6	6.675	40.050
4	Գլխամասի իրանի ապամոնտաժում	մ³	4.03	27.829	112.151
5	Գլխամասի իրանի կառուցում միաձույլ բետոնով B20	մ³	4.35	110.595	481.088
6	Ելքում գլխադիրի բարձրացում միաձույլ բետոնով B20 F100	մ³	0.22	68.364	15.040
7	Գլխամասի հիմքի ապամոնտաժում	մ³	0.72	27.829	20.037
8	Գլխամասի հիմքի կառուցում	մ³	0.65	110.595	71.887
9	Ջրամեկուսացում. իրան	մ²	8.15	1.189	9.690
10	Ջրամեկուսացում. հիմք	մ³	5.04	1.189	5.993
11	Վաքի կառուցում	մ³	0.93	82.516	76.740
12	Ատամի կառուցում	մ³	0.54	82.516	44.559
13	Գլխամասի նորոգում	մ³	0.8	110.595	88.476
14	Գլխամասի իրանի սվաղ 5սմ	մ²	7.8	3.249	25.342
	IX. Ե/բ խողովակներ d=1.25-1.5մ նորոգում				
1	Հունի մաքրում մուտքում ձեռքի աշխատանքով, բարձում ա/հ և տեղափոխում լցակույտ 4 կմ	մ³	8	6.675	53.400
2	Գլխամասի իրանի ապամոնտաժում	մ³	3.16	27.829	87.940
3	Գլխամասի իրանի կառուցում B20 F100	մ³	4.29	110.595	474.453
4	Ելքում գլխամասի բարձրացում միաձույլ բետոնով B20 F100	մ³	0.48	68.364	32.815
5	Մուտքում գլխամասի բարձրացում միաձույլ բետոնով B20 F100	մ³	0.48	68.364	32.815
6	Վաքի կառուցում	մ³	1.2	82.516	99.019
7	Ատամի կառուցում	մ³	0.48	82.516	39.608
8	Ելքում գլխամասի իրանի սվաղ h=5սմ	մ³	3.64	3.249	11.826
	X. Հավաքովի ուղղանկյուն բացվածքով Ե/բ խողովակներ նորոգում				
1	Հունի մաքրում մուտքում ձեռքի աշխատանքով, բարձում ա/հ և տեղափոխում լցակույտ 4 կմ	մ³	10	6.675	66.750
2	Հունի մաքրում ելքում ձեռքի աշխատանքով, բարձում ա/հ և տեղափոխում լցակույտ 4 կմ	մ³	12	6.675	80.100
3	Խողովակի մեջ մաքրում ձեռքի աշխատանքով, բարձում ա/հ և տեղափոխում լցակույտ 4 կմ	մ³	3	6.675	20.025
4	Մուտքում գլխադիրի կառուցում միաձույլ բետոնով B20 F100	մ³	1.09	68.364	74.517
5	Ելքում գլխադիրի կառուցում միաձույլ բետոնով B20 F100	մ³	1.09	68.364	74.517
6	Գլխադիրի ապամոնտաժում տեղափոխում լցակույտ 4 կմ	մ³	0.548	27.829	15.250
7	Նոր գլխադիրի կառուցում միաձույլ բետոնով B20 F100	մ³	2.43	68.364	166.125
8	Թևերի ապամոնտաժում ելքում/մուտքում	մ³	10.81	27.829	300.831

9	Թևերի կառուցում ելքում/մուտքում	մ³	12.16	68.364	831.306
10	Ջրամեկուսացում՝ թևերի	մ²	34.7	1.189	41.258
11	Ջրամեկուսացում՝ օղակի	մ²	8	1.189	9.512
12	Թևերի և գլխադիրի սվաղում h=5սմ	մ²	56.66	3.249	184.088
13	Վաքի և ատամի կառուցում	մ³	2.52	82.516	207.940
14	Հետադարձ լիցք	մ³	36	0.828	29.808
15	Քարային լիցք	մ³	6	5.722	34.332
				Ընդամենը	**1 700 000.004**

*Միավորի արժեքը ներառում է բոլոր ծախսերը, ներառյալ «Շահույթը» ՝ 11% և ԱԱՀ-ն՝ 20%

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02578338
Հ/Հ 900011025823

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Ա.Ա.Բ Պրոեկտ» ՍՊԸ
ք.Երևան, Արաբկիր փ.39/1ա
«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 00250339
ՀՀ 24701000978800[illegible]

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
«15» օգոստոսի 2019 թ. կնքված
ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/13Շ-1 ծածկագրով պայմանագրի

ՁԱՓԱԲԱԺԻՆ 1
ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ65+350-կմ77+350 հատվածի հիմնանորոգման աշխատանքների կատարման

(2019 թ. իրականացվելիք)

No	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		սկիզբը	**ավարտը**
0	Լաբորատոր փորձարկումներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 150 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
1	Հողային աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 80 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
2	Երթևեկելի մաս	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 130 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
3	Իջատեղեր	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 130 օր հետո
4	Մայթեր	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 120 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
5	Խողովակներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 80 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
6	Կամուրջներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 100 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
7	Անվտանգության էլեմենտներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 150 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ		**Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո**	**Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 150 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը**

(Հետագայում համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում)

No	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		սկիզբը	**ավարտը**
0	Լաբորատոր փորձարկումներ	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց 30 օր հետո
1	Երթևեկելի մաս	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց 25 օր հետո
3	Իջատեղեր	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց 25 օր հետո
4	Անվտանգության էլեմենտներ	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց 30 օր հետո
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ		**Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո**	**Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց 30 օր հետո**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02578338
ՀՀ 900010025823

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Ա.Ա.Բ Պրոեկտ» ՍՊԸ
ք.Երևան, Արաբկիր փ.39/1ա
«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 00250339
ՀՀ 2470100081880010

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
«15» օգոստոսի 2019 թ. կնքված
ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/13Շ-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45231177/13	Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ65+350-կմ77+350 հատվածի հիմնանորոգման աշխատանքներ	...	...	...	...	...	...		696, 864, 245.0	696, 864, 245.0	1, 620, 614 ,524.0	1, 620, 614 ,524.0	1, 620, 614 ,524.0	

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02578338
ՀՀ 90000025823
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Ա.Ա.Բ Պրոեկտ» ՍՊԸ
ք.Երևան, Արաբկիր փ.39/1ա
«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 00250339
ՀՀ 24701000916800100
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 4
« » 20թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն

Կ.Տ. Կ.Տ.

Հավելված 4.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը
Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը
պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն